Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____2010 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 1616-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասինե N 1616-Ն որոշման N 1 հավելվածի 178-րդ կետի 178.3.2-րդ ենթակետը ։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյան**

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

<Մոսկվա կինոթատրոն> ՍՊԸ-ի տնօրինությունն առաջարկել է Երևան քաղաքի Աբովյան 18 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող <Մոսկվա> կինոթատրոնի ամառային դահլիճի շենքի զբաղեցրած հողատարածքը անհատույց՝ սեփականության իրավունքով օտարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նախկինում Խորհրդային իշխանությունների կողմից քանդված Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու տեսքին համապատասխան տեղում նոր եկեղեցի կառուցելու համար:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասինե N 1616-Ն որոշման N 1 հավելվածի 178-րդ կետի 178.3.2-րդ ենթակետի՝ <Մոսկվա> ամառային կինոթատրոնի դահլիճի շենքն ունի Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կարգավիճակ:

Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասինե N 1616-Ն որոշման N 1 հավելվածի 178-րդ կետի 178.3.2-րդ ենթակետը, հետագայում սահմանված կարգով հողամասը Մայր Աթոռին տրամադրելու խնդրի լուծման համար:

ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյան